«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ և ՁԵՎԵՐԸ
ԱՌԱՐԿԱ	Կենսաբանություն
ՀԵՂԻՆԱԿ	Քնարիկ Նազարյան
ՄԱՐԶ	Արմավիր
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Ծիածանի միջնակարգ դպրոց

Բովանդակություն

Ներածություն.....3
ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ. ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ և ՁԵՎԵՐԸ

1. Դպրոցականների էկոլոգիական դաստիարակության վերաբերյալ հայեցակարգային մոտեցումները.....4
2. Դպրոցականների էկոլոգիական դաստիարակության իրականացումը ուսումնական և արտաուսումնական պարապմունքների ընթացքում 10
3. **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....15**

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը. Դպրոցականների էկոլոգիական դաստիարակության միջոցներն ու ձևերը առանցքային նշանակություն ունեն կրթական համակարգում իրականացվող բարեփոխումների համատեքստում:

Հաշվի առնելով երկրում էկոլոգիական զարգացվածության ցածր մակարդակը՝ անհրաժեշտ է դպրոցում ուսումնասիրվող առարկաների ուսումնական ծրագրերում ներառել էկոլոգիական բովանդակությամբ թեմաներ ավելի խորությամբ ուսումնասիրելու էկոլոգիական ժամանակակից խնդիրներ և դասընթացի ուսումնասիրությունը իրականացնել այնպիսի մեթոդներով և միջոցներով, որպեսզի արդյունվետ կերպով ձևավորվեն դպրոցականների էկոլոգիական գիտակցությունը, էկոլոգիական պատկերացումները, բնաճանաչողական կարողությունները, ինչը և կնպաստի նաև նրանց էկոլոգիական մշակույթի ձևավորմանը:

Հետազոտական աշխատանքի նպատակն է՝

- Դպրոցականների էկոլոգիական դաստիարակության միջոցներն ու ձևերի բացահայտումը

Աշխատանքի խնդիրներն են՝

- ուսումնասիրել և վերլուծել թեմայի վերաբերյալ գիտական գրականությունը, տեսական դրույթներն ու հայեցակարգային մոտեցումները,
- հիմնավորել միջառարկայական կապերի դերը դպրոցականների էկոլոգիական դաստիարակության գործընթացի արդյունավետ իրականացման գործում,
- հենվելով մեր մանկավարժական փորձի և թեմայի վերաբեյալ տեսակետների, կարծիքների գիտական մոտեցումների վրա՝ առաջադրել դպրոցականների էկոլոգիական դաստիարակության արդյունավետ ձևեր և միջոցներ:
- Հետազոտական աշխատանքի խնդիրների լուծման համար օգտագործել ենք մանկավարժական հետազոտության հետևյալ մեթոդները՝
- Տեսական՝ հիմնախնդրի վերաբերյալ գիտական գրականության ուսումնասիրում և վերլուծության:
- Էմպիրիկ՝ դիտում, զրույց, հարցազրույց, մանկավարժական փորձարարության արդյունքների վիճակագրական և մաթեմատիկական մշակում.
- Հետազոտական աշխատանքի տեսական նշանակությունը ունի են դպրոցականների էկոլոգիական դաստիարակության հիմախնդրի շուրջուսումնասիրություններ կատարողների համար:

Աշխատանքի գործնական նշանակությունը կայանում է նրանում, որ հետազոտական աշխատանքը կարող է օգտակար լինել տարրական դպրոցի ուսուցիչների համար:

Աշխատանքի կառուցվածքը. Աշխատանքը բաղկացած է ներածությունից, 1 գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ. ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ և ՁԵՎԵՐԸ

1.1 Դպրոցականների էկոլոգիական դաստիարակության վերաբերյալ հայեցակարգային մոտեցումները

Էկոլոգիայի պատմությունը գալիս է դարերից և սերտորեն կապված է բույսերի, կենդանիների, շրջակա միջավայրի մասին մարդու նախնական պատկերացումների հետ [5,13]:

Մարդիկ դեռևս վաղ ժամանակներից ունեցել են որոշակի պատկերացումներ կենդանիների, նրանց ապրելակերպի, բույսերի, նրանց աճման մասին:Այդ մասին հատկապես տեղեկություններ են ստացվել չինական, հնդկական, եգիպտական, հունական, հայկական և այլ գրավոր աղբյուրներից:

Ինչպես նշում է Լ.Թ.Ասատրյանը և Ն.Զ.Կարապետյանը ներկայումս գոյություն ունի հակասություն դպրոցականների էկոլոգիական կրթության նպատակների, խնդիրների և նրա բովանդակության տարբերակման միջև: Դա պայմանավորված է նրանով, որ էկոլոգիական դաստիարակության առաջադիր նպատակներն ու խնդիրները հիմնվում են ժամանակի էկոկենտրոն հայեցակարգի և նոր կրթության էկոլոգիական պահանջների վրա: Վերջինս առավել ցայտուն է դրսևորվում էկոլոգիական կրթության համակարգի սկզբնական աստիճաններում, և որքան բարձր է այդ աստիճանը, այնքան ավելի թույլ է արտահայտված հակասությունը[6,18]:

Յուրաքնչյուր պետության կայացման համար առաջին հերթին անհրաժեշտ է կայացած հասարակություն, իսկ հասարակության կայացման լավագույն գործիքն դպրոցն է: Ժամանակակից աշխարհում, երբ օրեցօր մեծանում է հասարակության կայացման ներգործությունը շրջակա միջավայրի վրա, այժմ առավել քան արդիական է դառնում հասարակության էկոլոգիական կրթության անհրաժեշտությունը:

Էկոլոգիական կրթությունը պետք է սկսել նախադպրոցական տարիքից և ապահովել դրա շարունակականությունը հանրակրթական դպրոցի բոլոր աստիճաններում:Կրտսեր դպրոցականները էկոլոգիայի մասին հիմնական տեղեկություն ստանում են Ես և շրջակա աշխարհը առարկան ուսումնասիրելիս, որի ընթացքում նրանք պատկերացում են կազմում կենդանի և անկենդան բնության, դրանց փոխազդեցությունների, առանձնահատկությունների, շրջակա միջավայրի հետ փոխհարաբերությունների մասին:

Հին աշխարհի փիլիսոփաները փորձելով պարզաբանել կենդանի օրգանիզմների և շրջակա միջավայրի փոխհարաբերությունները, իրենց կամքից անկախ պարզաբանել են էկոլոգիական շատ հիմնահարցեր[11,7]:

«Էկոլոգիական դաստիարակություն» հասկացության էությունը բնութագրվում է որպես աճող սերնդի ուսուցման, դաստիարակության, զարգացման անընդհատ գործընթաց՝ ուղղված ընդհանուր էկոլոգիական մշակույթի և էկոլոգիական

պատասխանատվության ձևավորմանը՝ իրեն հարազատ մարդկանց, իր երկրի և մոլորակի ճակատագրի նկատմամբ[11,8]:

Էկոլոգիական դաստիարակության միջոցով պետք է անհատի աշխարհաճանաչողությունը զարգացնել և հասցնել այնպիսի մակարդակի, որի շնորհիվ նա ընդունակ կլինի իր խմբի համար կենսական անհրաժեշտություն ունեցող հարցերի լուծման առումով պատասխանատվություն կրելու (գիտակցական մոտեցման ցուցաբերում):Այս տեսակետներից ելնելով՝ մանկավարժները առանձնացնում են էկոլոգիական դաստիարակության հետևյալ խնդիրները, որոնցից կրտսեր դպրոցականների համար կարևորում են հետևյալները՝

1.շրջապատի նկատմամբ ճիշտ վարվելակերպի մշակում,

2. էկոլոգիական վարքագիծ ունեցող քաղաքացու դաստիարակում,

3. հասարակության՝ մեջ ընդունելի մարդկային փոխհարաբերությունների հաստատում:

Դպրոցականների էկոլոգիական դաստիարակության նպատակի և խնդիրների շուրջ տարբեր հեղինակներ առաջարկում են տարբեր մոտեցումներ՝

էկոլոգիական մշակույթի ձևավորում, երեխայի վարքում բնության հետ գիտակցված հարաբերությունների որոշակի մակարդակի ձևավորում[11,6],

բնության, մարդկանց, իր կյանքում իր դերի նկատմամբ գիտակցված վերաբերմունքի մշակում

բնության նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի ձևավորում[6,13],

երեխայի մեջ բնության պահպանման, բարելավման, զարգացման անհրաժեշտության գիտակցման դաստիարակում

երեխաների էկոլոգիական գիտակցության ձևավորում, որը պետք է հիմնվի նրա խոր հուզազգացմունքային փորձի վրա

էկոլոգիական գիտակցության դրդապատճառային հիմքերի ձևավորում

երեխայի մեջ իր գոյության կենսամիջավայրի նկատմամբ վստահության զարգացում

կենդանի և անկենդան բնության տարբերությունների վերաբերյալ տարրական գիտելիքների, նրանց վերաձևավորման հարցում մտավոր և ֆիզիկական աշխատանքի դերի մասին պատկերացումների ձևավորում

արժեքային դիրքորոշման ձևավորում[

Սրանք մեթոդաբանական հիմք են հանդիսանում երեխաների էկոլոգիական դաստիարակության, բնապահպանական կարողությունների զարգացման համար:

Տարբեր հեղինակների կողմից առանձնացված են էկոլոգիական դաստիարակության նպատակները, բնութագրված են «էկոլոգիական մշակույթ», «էկոլոգիական գիտակցություն», «էկոլոգիական վարք», «հոգատար վերաբերմունք բնության նկատմամբ» հասկացությունները:

Այնուամենայնիվ էկոլոգիական դաստիարակության առաջատար խնդիրներն են մնում՝ «մարդ-բնություն-հասարակություն» փոխադարձ կապի իմացության անհրաժեշտությունը, էկոլոգիական խնդիրների լուծման գործնական ունակությունների ձևավորումը, էկոլոգիական արժեքային կողմնորոշումների դիրքորոշումների, էկոլոգիական աշխատանքի հմտությունների ձևավորումը:

Էկոլոգիական դաստիարակությունը էկոլոգիական մշակույթի, շրջակա միջավայրի նկատմամբ էկոբարոյական վարքագծի ձևավորմանն ուղղված գործընթաց է:

Այսինքն՝ էկոլոգիական կրթությունը անընդմեջ գործընթաց է՝ նպատակաուղղված հասարակությանը էկոլոգիական գիտելիքներով, էկոլոգիական դաստիարակության խնդիրների իրականացմանը, էկոլոգիական մշակույթի ձևավորմանը: Էկոլոգիական սխալներ չանելու համար ժամանակակից մարդը պետք է զինված լինի տարրական էկոլոգիական գիտելիքներով և նոր էկոլոգիական մտածողությամբ

Դպրոցականների էկոլոգիական դաստիարակության խնդիրների թվում սովորաբար ընդգրկվում է բույսերի և կենդանիների խնամքի կարողությունների ձևավորումը: Էկոլոգիական կրթության և դաստիարակության խնդիրները ներկայացվում են երեխայի անձի զարգացման, ուսուցման և դաստիարակության գործընթացի միասնության մեջ, որտեղ վարքի և գործունեության պահանջմունքների ձևավորումն ուղղված է շրջակա միջավայրի բարելավմանն ու առողջ կենսակերպին [6,137]:

Դպրոցականների էկոլոգիական դաստիարակության խնդիրները հուզել են հայ մանկավարժության դասականներին, Ա. Շիրակացուն, Խ.Աբովյանին, Ռաֆֆուն և այլոց:

Խաչատուր Աբովյանը գտնում էր, որ կրթության բովանդակության մեջ մեծ տեղ պետք է հատկացնել բնագիտական, աշխարհագրական գիտելիքներին, իսկ ուսուցման ձևերից կարևոր էր համարում բնաճանաչողական, երկրագիտական էքսկուրսիաներըիսկ հայ ուսուցիչների ուսուցչապետ Ղ. Աղայանը նշում էր. «Բնությունը համաչափություն և կանոնադրություն է սիրում, ոչ մի բան մարդկային հնարմանց մեջ այդ հրաշալի ներդաշնակությանը այնքան համանմանելու պահանջ չունի, ինչքան մարդու կրթության արվեստը»[10,121]:

Այսպիսով՝ ելնելով վեր քննարկված մոտեցումներից կարելի է առանձնացնել դպրոցականների էկոլոգիական կրթության և դաստիարակության խնդիրները՝

բնաճանաչողական ընդունակությունների, բնապահպանական կարողությունների ձևավորում[

բնության երևույթների, բուսական ու կենդանական աշխարհի փոխկապակցվածության վերաբերյալ պատկերացումների, հասկացությունների և գիտելիքների ձևավորում

բնության մեջ ճիշտ վարքագծի դրսևորման դրդապատճառների սովորույթների ու հմտությունների ձևավորում

կենդանի բնության նկատմամբ հոգատար վերաբերմունքի ձևավորում,

միմյանց նկատմամբ հանդուրժողականության, հարգանքի ունակության ձևավորումը

Էկոլոգիական կրթություն ասելով պետք է հասկանալ էկոլոգիական գիտելիքների, կարողությունների և հմտությունների այն համակարգը, որի յուրացումը նպաստում է էկոլոգիական դասիարակության գործընթացի իրականացմանը և խնդիրների լուծմանը: Էկոլոգիական կրթությունը էկոլոգիական գիտելիքների, կարողությունների և հմտությունների համակարգ է, որը միտված է երեխաների մեջ շրջապատող բնական աշխարհի, երևույթների, նրա օրենքների և օրինաչափությունների մասին գիտելիքների և պատկերացումների, բնաճանաչողական ընդունակությունների,բնապահպանական կարողությունների իմացական հետաքրքրությունների, էկոլոգիական մշակույթի ձևավորմանը: Երեխաների իմացական հետաքրքրությունների ակտիվացմանը զուգընթաց լուծվում է նրանց բնաճանաչողական ընդունակությունների և բնապահպանական կարողությունների զարգացման հարցը:

Երեխայի բնաճանաչողական ընդունակություններ ասելով պետք է հասկանալ բնության օբյեկտները, երևույթները ընկալելու, ճանաչելու մտավոր արձագանքների արագությունը, դրանց օբյեկտիվ գնահատական տալու, շնչավորելու, հարաբերակցվելու ընդունակությունը:

Այդ ունակությունները զարգացնելու նպատակով պետք է օգտագործել տարբեր միջո ցներ, օրինակ՝ դիդակտիկ խաղեր, հանելուկներ, հեքիաթներ, պարզագույն մաթեմա տիկական խնդիրներ, էքսկուրսիաներ և այլն:

Էկոլոգիական դաստիարակության կարևորագույն մանկավարժական պայմաններն են՝ զարգացնող միջավայրի կազմակերպումը, բնապահպանական աշխատանքների պլանավորումը և էկոլոգիական տեղեկատվության մշտական ապահովումը, ծանոթ ացնել բնության երևույթներին, տալ պարզագույն գիտական գիտելիքներ դրանց մաս ին:

Հարկավոր է երեխային սովորեցնել նկարագրել արտաքին աշխարհը և մասնավորապես այն ամենը, ինչ երեխան տեսնում է նկարում: Նա պետք է կարողանա զգալ առարկաների իրական հատկանիշները, տարբերակել լույսն ու ստվերը, գույնը ձևը և ծավալը, դադարի և շարժման վիճակները, ժամանակն ու տարածությունը, իր մարմնի մասերը և այլն:

Էկոլոգիական դաստիարակության իրականացման կարևորագույն միջոցներն են խաղերը, էքսկուրսիաները, դրանց ընթացքում բնության երևույթների, բնական համակեցությունների մեջ կատարվող փոփոխությունների դիտումները և դրանց արձանագրությունները:Բնական պայմաներում խաղի անցկացումն ունի իր բարդությունը. Երեխաները հեշտությամբ են ուշադրությունը շեղում և կենտրոնանում երկրորդական առարկաների և անձանց վրա: Հարկավոր է լիարժեք օգտագործել գեղարվեստական ձևավորման հնարավորությունները կանխատեսել հետաքրքիր խաղային պահեր և լուծումներ

Բնապահպանական աշխատանքները պետք է դառնան ամենօրյա աշխատանք, սովորություն, ծես: Երեխային տրվում է հնարավորություն՝ ընտրելու տվյալ օրվա իր անելիքը. ջրել ծաղիկները, կերակրել կենդանիներին, թռչուններին: Այս կրկնությունները դառնում են սովորություն: Երեխայի կյանքն ինքնին բնագիտական գործունեությունն է:Էկոլոգիական դաստիարակությունը և կրթությունը,

գիտելիքների ստացումը, բնապահպանական մտածելակերպի, աշխարհայացքի ձևավորումը սկսվում է դպրոցից:

Դպրոցի ուսուցիչը պատասխանատու է երեխայի կյանքի և առողջության, կրթելու և դաստիարակելու, կարողությունների և հմտությունների ձևավորման, ինչպես նաև երկրին կատարյալ քաղաքացի տալու համար[4,32]:

Ըստ Զ. Ասատրյանի՝ Ինչպիսին մանկավարժի աշխատանքի արդյունքն է, այդպիսին էլ կլինի մեր հասարակության վաղվա օրը[1,35]:

Սկսած «Ես և շրջակա աշխարհը» առարկայի առաջին դասից՝ կապ է ստեղծվում հասարակության և բնության միջև, որը դառնում է անբաժանելի օրգանական ամբողջություն, իսկ ինքը՝ սովորողը այդ ամբողջության մի մասնիկը: Սա հնարավորություն է տալիս վաղ հասակից ստեղծել ամբողջական բարոյական և էկոլոգիական գաղափարներով անհատ, ով պատկերացնում է մարդու ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, պատասխանատվությունը դրա հանդեպ՝ թե' դրական և թե' բացասական իմաստով:Դպրոցականները որոշակի գիտական գիտելիքներ են ձեռք բերում բույսերի և կենդանիների, բնության երևույթների, շրջապատող բնական և սոցիալական միջավայրի մասին[6,94]:

Ուստի սովորողների համար մատչելի կերպով պետք է բացահայտվեն դպրոցում առկա հակասությունները առկա հասարակության և բնության միջև: Սովորողներին պետք է ծանոթացնել իրական բնապահպանության առջև ծառացած խնդիրներին:

Սովորողները պետք է լուծեն ոչ թե գլոբալ էկոհարցեր, այլ այնպիսի հարցեր, որոնք վերաբերվում է իրենց շրջապատին, և կարող են իրենց գիտելիքների ու կարողությունների սահմաններում լուծել :Պետք է կարողանան տեսնել, գնահատել, կանխել իրենց շրջապատում տեղի ունեցող բնապահպանական խախտումները, հմտությունները փոխանցել ընտանիքի անդամներին և ընկերներին: Բնապահպանական կրթությունը ոչ միայն գիտելիքների ձևավորում է, այլև բնապահպանական գործնական կարողությունների զարգացում:

Ուսումնասիրելով «Բնագիտություն» առարկան դպրոցականները ծանոթանում են բնության մեջ առկա և սոցիալական միջավայրի հետ ունեցած կապերին կենսաբանություն և աշխարհագրություն առարկաների միջև, եղած բնապահպանական խնդիրների, էկոլոգիական շղթային, էկոլոգիական աղետներին: Դիմելով պատմության օգնությանը՝ (հասարակություն-բնություն ներդաշնակ փոխազդեցությունը տեսականորեն հիմնավորելու համար), ուսուցիչը ներկայացնում է գիտական փաստարկներ և պատճառներ բնությունը պահպանելու, ինչպես կոնկրետ երկրի, այնպես էլ աշխարհի մակարդակով: Իմացական գործունեությունը խթանում են այնպիսի իրավիճակներ, երբ անհրաժեշտ է բարոյական որոշում կատարել, և այդ իրավիճակները նպաստում են սովորողների արժեհամակարգի ձևավորմանը[14,3]:

Ակտիվանում է նաև ձգտումը՝ գեղագիտական զգացմունքները ստեղծագործական միջոցներով արտահայտելու (նկարչության, բանաստեղծության միջոցով): Արվեստին բնորոշ սինթետիկ մոտեցումը և զգայականությունը դեպի իրականությունը հատկապես կարևոր են բնության պահպանման դրդապատճառները զարգացնելու համար[14,52]:

Անհրաժեշտ է նաև ուսուցանել վերլուծելու և կարևորելու բնապահպանական արժեքները, շահերն ու կարիքները, նկարչության փորձերի և բնապահպանական դիտարկումների հետ միասին զրույցների, փաստերի, գործիչների կարծիքների միջև համեմատություն անցկացնելով՝ դրանց սեփական վերաբերմունքի առկա բնապահպանական խնդիրների նկատմամբ:

Աշակերտները սովորում են խնամել տնային բույսերը, հետազոտում են լանդշաֆտային դիզայնի հնարավորությունները: Էկոլոգիական կրթության և դաստիարակության նպատակն է աճող սերնդին ծանոթացնել բնության, շրջակա միջավայրի առանձնահատկություններին, պարզաբանել բնության կարևորագույն օրենքները և այն ուղիները, որոնց միջոցով կարելի է պահպանել ու վերարտադրել՝ բնությունը:

Անհրաժեշտ է կրտսեր դպրոցական տարիքից նպատակաուղղված ձևով դաստիարակել պատասխանատվություն մեզ շրջապատող միջավայրի նկատմամբ: Կրտսեր դպրոցականների էկոլոգիական դաստիարակության նպատակն է ձևավորել պատասխանատու վերաբերմունք շրջակա միջավայրի նկատմամբ: Տարրական դպրոցում երեխաները յուրացնում են գիտելիքներ բույսերի և կենդանիների, շրջակա միջավայրի, բնական երևույթների միջև:Այնուհետև սովորողների համար մատչելի կերպով բացահայտվում են առկա հակասությունները հասարակության և բնության միջև: Սովորողներին պետք է ծանոթացնել իրական բնապահպանական՝խնդիրներին[20,3]:

Դպրոցականների էկոլոգիական դաստիարակության գործընթացի արդյունավետ կազմակերպման ոչ ավանդական ուսուցման կազմակերպման ձևերի թվում են էկոլոգիական խաղերը, թեմատիկ դասերը («Անտառի տոն», «Տարվա եղանակները»,«Ծառատունկ», «Ծառի ու ծաղկի տոն», «Պահպանիր բնությունը» միջոցառումներ,բնաճանաչողական մրցույթները): Այսպիսի միջոցառումները սովորողների մեջ ձևավորում են ակտիվ քաղաքացիական դիրքորոշում հայրենի բնության շրջապատող միջավայրի նկատմամբ, երեխաներին դուր են գալիս զանազան մրցույթները: Խաղային մրցույթները կարելի է համադրել ճամփորդությունների և արշավների հետ: Ցածր դասարանի աշակերտները սովորում են խնամել տնային բույսերը,դպրոցամերձ հողամասում եղած ծառերն ու թփերը, հետազոտում են լանդշաֆտային դիզայնի հնարավորությունները: Դպրոցականների էկոլոգիական դաստիարակության խնդիրները լուծելիս սովորողներն իրենց անկախ գործունեությամբ որոշակի բնապահպանական կարողություններ են ձեռք բերում[15,75]: Էկոլոգիական դաստիարակության ինտեգրատիվ, միջառարկայական բնույթը ենթադրում է աշխարհայացքային նշանակություն ունեցող գիտելիքների և բարոյականային, աշխատանքային որակների ձևավորում, որը իր հերթին պահանջում է էկոլոգիական դաստիարակության ճկուն ձևերի մշակում՝ միջառարկայականության հիմքի վրա:

1.2 Դպրոցականների էկոլոգիական դաստիարակության իրականացումը ուսումնական և արտաուսումնական պարապմունքների ընթացքում

Դպրոցականների էկոլոգիական կրթության, դաստիարակության խնդիրների լուծման և օպտիմալացման համար միջառարկայական կապերի ստեղծումը հումանիտար և բնագիտական, գեղագիտական առարկաների միջև անհրաժեշտություն է [11,39]:

Ինչպես արդեն նշել ենք դպրոցականների էկոլոգիական կրթության ու դաստիարակության համար լայն հնարավորություններ են տալիս մայրենի, մաթեմատիկա, Ես և շրջակա աշխարհը, երաժշտություն առարկաները:Դրանք այն առարկաներն են, որոնք, սկսած առաջին դասարանից դպրոցականների մոտ ձևավորում են բնության մասին տարրական հասկացություններ, որոնք տարրական դպրոցի հաջորդ աստիճաններում վերածվում են դատողությունների՝ հետո նոր, գիտելիքների, ինչպես նաև ձևավորում են բնապահպանական գործունեության պահանջմունքները, բնության մեջ կողմնորոշվելու և բնությունն արժևորելու կարողությունները[13, 75]:

Միջառարկայական կապերի իրացմամբ էկոլոգիական դաստիարակության գործընթացի օպտիմալացման համար Լ. Ասատրյանն ու Փ. Սարգսյանն մշակել են կրտսեր դպրոցականների էկոլոգիական կրթության հատուկ ցիկլեր՝ ըստ դասարանների[2,80]:

Հասարակական շփման հմտությունների, բնության վերաբերյալ հասկացությունների ձևավորում.

ա. տեղեկատվության փոխանակում և զգայական փորձի ստուգում,

բ. բնության վերաբերյալ տարբեր հասկացությունների և գաղափարների ձևավորում,

գ. հաղորդակցում միմյանց և բնության հետ,

դ. հարցումների միջոցով աշխարհի ճանաչողություն,

ե. երեխայի մեջ կյանքի և կենդանիների նկատմամբ հարգանքի ու արժեքավորման ունակության մշակում,

զ. կենդանիների, ծառերի պահպանում:

Այս դասընթացի նպատակն է առաջին դասարանցու մեջ ձևավորել առօրյա հասկացություններ և տարրական գիտելիքներ՝ իրենց շրջապատող հասարակության և բնության վերաբերյալ:

Դասընթացից երեխաները պետք է տեսնեն ու հասկանան առարկայական ոլորտների միջև եղած կապերը և նրանց հարաբերված լինելը կյանքին:

Մայրենի

Դպրոցում, անցնելով դասարանից, դասարան երեխաներն կատարելագործում են իրենց գիտելիքները, ընդունակություններն ու կարողությունները աշխարհի, բնության երևույթների նկատմամբ:

Այս առարկան օգնում է ուսումնասիրել՝

.կենդանիների տեսակները, վարքը,

.բուսական աշխարհը

.ծառատունկը

.տարվա եղանակները

.բնության երևույթները

.դերային խաղեր[2,79]:

Մաթեմատիկա

Այս առարկան հնարավորություն է տալիս երեխային կապվելու իրական կյանքի հետ:Կիրառման իմացությունը օգնում է երեխաներին իրենց գիտելիքներն կիրառել նոր իրավիճակներում՝

.Հեռավորության չափում, լույսի արագություն,

.բնապահպանության օրինակներ թվերի լեզվով,

.հասարակությանը վերաբերող խնդիր-առաջադրանքներ,

.աստղերին վերաբերող թվային տվյալներ,

.ճանապարհորդության ժամանակը և արագությունը[2,80]:

Նշված թեմաներում փորձ է արվել մաթեմատիկան միասնականացնել Ես և շրջակա առարկայի հետ;

Կերպարվեստ

Այս առարկան դպրոցականներին տալիս է գեղագիտական և գեղարվեստական ընկալման այնպիսի հնարավորություններ, որոնք կարող են ազդել նրանց կարծիքների, ներկայի և ապագայի ընկալման վրա:Կրտսեր դպրոցականների կատարած նկարները բացահայտում են աշխարհի մասին նրանց արդեն ձևավորված գիտելիքները, հայացքները, մտածողությունը, գիտակցությունը

Կերպարվեստի դասավանդումը կրտսեր դասարաններում պետք է հետապնդի ոչ միայն ստեղծագործական-կատարողական,այլև գիտելիքների միասնականացման և դաստիարակչական նպատակ:

Բնագիտություն

Այս առարկան հնարավորություն է տալիս դպրոցականների մեջ ձևավորել՝

.շրջակա միջավայրի, կենդանի և անկենդան բնությանը վերաբերող հասկացություններ,

.տիեզերքին վերաբերող դատողությունների ձևավորում,

.աշխարհագրական գիտելիքների զարգացում,

.կենսաբանական հասկացությունների ձևավորում,

.լեզվական կարողությունների և բառապաշարի զարգացում,

.էկոլոգիական գիտակցության ձևավորում:

Էկոլոգիական կրթության գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու համար ներդասարանային տարբերակված ուսուցման միջոցները, տարբեր մակարդակի առաջադրանքների համակարգի մշակումը, միջառարկայական կապերի կիրառումը, դասերի տարբեր ձևերի՝ խաղ - դասերի, էքսկուրսիա - դասերի կիրառությունը խիստ կարևոր են:Այդպիսի դասընթացների ժամանակ ուսուցիչը իմանում է, թե ինչու որոշ երեխաներ բնությանը վերաբերվում են մեծ հետաքրքրությամբ և սիրով, բացասական արարքներ չեն կատարում, իսկ մյուսները իրենց բոլորովին այլ կերպ են դրսևորում: Միաժամանակ յուրաքանչյուր մանկավարժի պարտքն է երեխայի մեջ հոգատարություն սերմանել կենդանի բնության նկատմամբ, նրանք միշտ պետք է երեխաների մեջ արթնացնեն պայծառ, վեհ զգացումներ, նրանց հոգում բարյացակամ, հոգատար վերաբերմունք ձևավորեն կենդանի բնության և գեղեցիկի նկատմամբ:Արտադասարանական ուսուցումը տարբեր տարիքի երեխաների մոտ տարբեր մոտեցումներ է պահանջում:

Տարրական դպրոցում օգտակար է երեխաներին բնության սեզոնային երևույթներին, կենդանական աշխարհի բազմազանության, բնության մեջ մարդու պրակտիկ գործունեության բնույթի հետ ծանոթացնելը: Ինքնուրույն աշխատանքների ժամանակ, ուսուցչի ղեկավարությամբ աշակերտները մոտենում են բնական համակարգերի գոյության օրենքների, կանոնների և սկզբունքների հասկացությանը, ինչը չի երևում դասապրոցեսի ժամանակ [6, 157]:

Արտադասարանական տարբեր տեսակի աշխատանքների կազմակերպման համար հատուկ ուշադրություն պետք է դարձվի էքսկուրսիաների, խաղերի, վիկտորինաների վրա:Այդ աշխատանքներին դպրոցականները ներգրավվում են կամավորության սկզբունքով՝ ստեղծագործական մեծ ակտիվություն ցուցաբերելով:Բացի խմբակներից, կարևորվում են նաև էկոլոգիական տոները՝ թռչնի օր, ծաղկի տոն, բերքի տոն, միասնական ծառատունկ, շրջակա միջավայրի օր: Էկոլոգիական խաղերը զարգացնում են էկոլոգիական գիտելիքների մակարդակը, խթանում են սովորողների դրդապատճառային, հետաքրքրությունների և հուզական ոլորտները՝ բնության պահպանության մանկական նախագծերի մրցույթների, և խաչբառերի մրցույթների, էկոլոգիական վիկտորինաների միջոցով: Կարևորվում են նաև դերային խաղերը:Պետք է հաշվի առնել այն փաստը, որ այդպիսի պարապմունքների

ժամանակ սովորողների հիմնական էկոլոգիական գիտելիքների ձևավորվածության մակարդակները տարբեր են և զրույցների ու թեստերի միջոցով նրանց կարելի է բաժանել խմբերի:Սակայն նրանց ընդհանուր տարբերակիչ առանձնահատկությունը բազմամակարդակությունն է:Այդպիսի կողմնորոշիչ թեստերի հիմքում պետք է դնել էկոլոգիական հասկացությունների իմացությունը, էկոլոգիական խնդիրների ընկալումը, բնության և մարդու պատճառահետևանքային և էկոլոգիական կապերի իմացությունը, փաստերի իմացության բացահայտումը և այլն:Բացի այդ, սովորողների էկոլոգիական գիտելիքների մակարդակը ոչ բոլոր դասարաններում է հավասար, քանի որ ոչ բոլորն են հետաքրքրվում բնագիտական հոսքի առարկաներով: Սովորողների մի մասն էլ հետաքրքրվում է բնություն, բնագիտություն, կենսաբանություն, աշխարհագրություն առարկաներով, և ինքնուրույն ուսումնասիրում են լրացուցիչ գրականություն և նրանց էկոլոգիական գիտելիքների ձևավորման գործում մեծ դեր են խաղում բույսերի, կենդանիների, ջրոլորտի, բուսական և կենդանական աշխարհի մասին տարբեր հեռուստահաղորդումները, ինչպես նաև համացանցը: Ուսուցիչը պետք է կարողանա ճիշտ կողմնորոշվել սովորողների տարբեր խմբերի հետ ինչպիսի արտաուսումնական պարապմունքներ անցկացնել:

Մանկավարժական աշխատանքի արգասիքը ուսումնադաստիարակչական գործընթացում առանձին վերցրած յուրաքանչյուր աշակերտի գիտելիքի, կարողությունների, հմտությունների, նրա զարգացվածության, դաստիարակվածության մակարդակն է: Որքան ուսուցիչը պարզ է պատկերացնում մանկավարժական օրինաչափությունները, այնքան արդյունավետ կարող է լինել նրա անձնական գործունեությունը[4,15]:
Քանի որ, կրտսեր դպրոցականների բնաճանաչողական ընդունակությունների և բնապահպանական կարողությունների զարգացումը էկոլոգիական կրթության խնդիրներից մեկն է,ապա այն պետք է հենվի դասերի, ինքնակրթության ընթացքում նրանց ստացած տեսական գիտելիքների վրա:Հենց այս խնդիրը կարող է իր արդյունավետ լուծումը ստանալ սովորողների արտաուսումնական աշխատանքներում՝ խմբակներում, ակումբներում, էկոլոգիական ճամբարներում, բնապահպանական ընկերություններում:Կրտսեր և դեռահաս դպրոցականներին հասանելի և հետաքրքիր են թռչնաբների պատրաստումը, կենդանիների խնամքը բույսերի աճեցումը և խնամքը դպրոցականները կարող են կատարել ավելի բարդ աշխատանք, օրինակ՝ դպրոցի բակի լանդշաֆտի պլանի կազմումը, դպրոցի շրջապատում թփերի, ծաղկանոցների տնկման, ձևավորման սխեմաների մշակումը, էկոլոգիական տոների, էկոլոգիական խաղերի սցենարի կազմումը և այլն: Էկոլոգիական կրթության արտաուսումնական պարապմունքների մեջ առանձնահատուկ նշանակություն ենք տալիս արդեն մեր դպրոցներում դասերին կիրառվող ինտերակտիվ խաղերին:

Բնաճանաչողական, բնապահպանական գործունեության պատրաստության կառուցվածքում հատուկ տեղ է զբաղեցնում տարբեր իրավիճակների կամային առանձնացումը:Ներգրավվելով բնապահպանական գործունեության մեջ՝ դպրոցականները ցուցաբերում են հուզական վերաբերմունք, որն արտահայտվում է էկոլոգիական զգացողություն վիճակով[16,4]:
Հետազոտությունները ցույց են տվել, որ եթե դպրոցում լուրջ ուշադրություն է

դարձվում էկոլոգիական կրթության կազմակերպմանը, ապա սովորողները արագ և արդյունավետ են յուրացնում ուսումնական նյութը:
Էկոլոգիական բնույթի արտաուսումնական խմբակները կապված են կենսաբանության և աշխարհագրության հետ և մեծ նշանակություն ունեն կենդանական աշխարհի բազմազանության, շրջակա միջավայրի պահպանման վերաբերյալ գիտելիքների հարստացման ու խորացման ուղղությամբ՝ դաստիարակելով խնայողական վերաբերմունք ամբողջ կենդանականի նկատմամբ:
Էկոլոգիական կրթության համակարգը կառուցվում է էկոլոգիական և ավանդական արժեքների նոր հարացույցի վրա: Այսօր մարդը, որպեսզի պաշտպանի իր անկրկնելի տեսակը և բնական բազմազանությունը, պետք է հասկանա բնության անկրկնելիությունը և բազմակողմանի արժեքը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով՝ թեմայի շրջանակներում մենք բազմակողմանի ուսումնասիրել ենք այնպիսի հարցեր, ինչպիսիք են դպրոցականների առջև ծառացած բնապահպանական խնդիրները, շրջապատի նկատմամբ ճիշտ վարվելակերպի ձևավորումը, ճիշտ քաղաքացու դաստիարակումը, հասարակության մեջ ընդունելի մարդկային փոխհարաբերությունների հաստատումը :

Անդրադարձ կատարեցինք դպրոցականների էկոլոգիական դաստիարակության միջոցներին, առանձնահատկություններին, ինչպես նաև կրտսեր դպրոցականների էկոլոգիական դաստիարակության արտաուսումնական և արտադասարանական պարապմունքների գործընթացին: Աշխատությունում անդրադարձ ենք կատարել նաև դպրոցականների էկոլոգիական դաստիարակության հայեցակարգային մոտեցումների վերլուծությանը:

Մեր կողմից իրականացրած ուսումնասիրությունների և հետազոտությունների արդյունքում արել ենք մի շարք հետևություններ, մասնավորապես՝

1. Հանրակրթական դպրոցներում ուսուցանվող բնագիտություն առարկան նպաստում է աշակերտների էկոլոգիական դաստիարակությանը:
2. Էկոլոգիական դաստիարակության հիմքում ընկած է ինտեգրատիվ, միջառարկայական բնույթը պահանջող, աշխարհայացքային նշանակություն ունեցող, գիտելիքների և բարոյակամային աշխատանքային որակների բարդ համակարգը, որը ենթադրում է էկոլոգիական դաստիարակության ճկուն ձևերի մշակում՝ միջառարկայականության հիմքի վրա::
3. Մանկավարժները գտնում են, որ գոնե յուրաքնչյուր ամիսը մեկ պետք է կազմակերպել արտադասարանական միջոցառումներ, քանի որ դրանց դպրոցականները ներգրավվում են կամավորության սկզբունքով՝ ստեղծագործական մեծ ակտիվություն ցուցաբերելով:
4. Մանկավարժներից գտնում էին, որ զրույցի միջոցով կարող են երեխաներին հանգեցնել էկոլոգիական ճիշտ դաստիարակությանը:
5. էկոլոգիական կարողությունները զարգացնելու նպատակով աշակերտների համար ստեղծվում են բարենպաստ պայմաններ, քանի որ դրանք նպաստում են դպրոցականների էկոլոգիական դաստիարակությանն ու մարդ-բնություն փոխադարձ կապին:

Ելնելով՝ << ԴպրոցականներիէԿոլոգիական դաստիարակության միջոցները և ձևերը >> խորագրով հետազոտական աշխատանքից եկանք հետևյալ մի շարք եզրահանգումների՝

1.Յուրաքանչյուր պետության կայացման համար առաջին հերթին անհրաժեշտ է կայացած հասարակություն, իսկ հասարակության կայացման լավագույն գործիքն դպրոցն է: Ժամանակակից աշխարհում,երբ օրեցօր մեծանում է հասարակության կայացման ներգործությունը շրջակա միջավայրի վրա, այժմ առավել քան արդիական է դառնում հասարակության էկոլոգիական կրթության անհրաժեշտությունը;

2.Էկոլոգիական սխալներ չանելու համար ժամանակակից մարդը պետք է զինված լինի տարրական էկոլոգիական գիտելիքներով և նոր էկոլոգիական մտածողությամբ:

3.Դպրոցում այն կարելի է կազմակերպել ակտիվ ուսուցման մեթոդներով:Դասի ընթացքում ընտրել ուսուցման ձևերից՝ միջոցառումները, արշավների կազմակերպումները բնության մեջ ուսումնական ճամփորդությունները՝ հիդրոէլեկտրոկայաններ, ջերմակայաններ, արգելավայրեր և արգելոցներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ասատրյան Զ.Ա., Տարրական կրթության մանկավարժություն ուսումնամեթոդական ձեռնարկ (դասախոսությունների ժողովածու), Եր.: Տիգրան Մեծ, 2017:
2. Ասատրյան Լ. Թ., Սարգսյան Փ.Ա., Նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի երեխաների էկոլոգիական կրթությունն ու դաստիարակությունը. Եր. Զանգակ- 97:
3. Ասատրայան Լ. Թ. Էկոլոգիական կրթության կառավարման հիմունքները. Մենագրություն , Եր. Արտագրես, 2007:
4. Ասատրյան Լ. Թ., Ավանեսյան Լ.Գ., Ա.Ս.Սահակյան Դպրոցականների էկոլոգիական դաստիարակության բովանդակությունը ավագ դպրոցում, Երևան, Զանգակ, 2002:
5. Ասատրյան Լ. Թ., Կարապետյան Ն. Զ., «Ես և շրջակա աշխարհը» ինտեգրված դասընթացի դասավանդման մեթոդիկա, ուսումնամեթոդական ձեռնարիկ դասախոսությունների ժողովածու, Երևան,Արտագերս 2016:
6. Ամիրջանյան Յու.Ա., Մանկավարժություն, Երևան, 2005:
7. Ա.Մ. Սարաֆյան Հոդված 3, 2017:
8. Ըստ ուսումնական դասընթացների առարկայական չափորոշիչներ և ծրագրեր
9. Ղույումչյան Գ. Ե. Մանկավարժություն,գիրք 1, Երևան, Զանգակ-97, 2005:
10. Մարուխյան Ռ., Հովհաննիսյան Ա., Անձի էկոլոգիական կուլտուրան, Երևան, Արևիկ, 2005:
11. www.aniedu.am,index.documents
12. http://blognews.am/arm/news/91275/ekologiakan-khndirner-usumnakan
13. http://emanuelagjoyan.blogspot.am/2013/09/blog-post_4.html
14. http://esajournals.onlinelibrary.wiley.com/hub/journal/10.1002/(ISSN)1939-9170/
15. https://anahit75.wordpress.com/2014/07/10/բնապահպանական-կրթությունը-դպրոցում/